




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

503

Հ. ԶՀԱՆԳՅԱՆԻ

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ԲԶԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ


ՊԵՏԶՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

329.154(47-41)

ԻՆԶՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ԲԶԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Պետերատի տպարան
Հրատար. № 1853
Գլխավոր 6964 (բ)
Պատկեր 5252
Տիրած 6000



11-30245 91

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԲՁԻՁԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մեր յերկրի սոցիալիստական շինարարութեան, սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում, Լենինյան Կոմյերիտիութունն ունեցել է և ունի հսկայական հաջողութիւններ: Այդ հաջողութիւններն ամենից անաջ արտահայտվում են այն շրջադարձով, վորն իր բազմամիլիոն մասսայով կատարել է Կոմյերիտիութունը գեպի անտեսական և արտադրական կոնկրետ խնդիրները, դեպի սոցիալիզմի կոնկրետ կառուցումը: Այդ հիման վրա ամէլ ու ամբողջել է Կոմյերիտիութեան քաղաքական ախտիվութիւնը ու նրա ծավալուն աշխատանքների անսահման կշիռը յերկրի ժողովրդական անտեսութեան բոլոր բնազավառներում: Կոմյերիտական մասսան իր վողջ յեռանդով ու աշխատանքային ենտուզիացմով կառչել է սոցիալիզմի կառուցման մեծ դործին: Կոմյերիտիութիւնը մարտնչում է արտադրական-անտեսական պլանների կատարման, աշխատանքի սոցիալիստական ձեւերի, սոցմըցման ու հարվածայնութեան ծավալման, դշուղի սոցիալիստական վերակառուցման, կոլեկտիվ և խորհրդային անտեսութիւնների շինարարութեան, արտադրութեան, ռացիոնալացման և մեքենայացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման և վորակի բարձրացման, ներքին միջոցների ուղտադործման համար մեր աքն-տեսական-շինարարութեան բոլոր բնազավառներում:

Անկասկած այս հաջողութիւններն արդշունք են այն անհաշտ պայքարի, վորպիսին Կոմյերիտիութիւնը կուսակցութեան դեկտարութեամբ մղել է յերկու ֆրոնտում, կուսակցութեան դժից կատարվող բոլոր տեսակի թեքումների, չեղումների և տատանումների դեմ: Կոմյերիտիութիւնը կուսակցութեան դեկտարութեամբ կարողացավ ժամանակին կողմորշվել սրեցկիզմի դեմ մղվող պայքարում—տալով նրան ջախջախիչ հակահարված: Այլ թեքման դեմ, վորպես ներկա շրջանի գլխավոր վտանգի կուսակցութեան և Կոմյերիտիութեան շարքերում, ծավալվող պայքար—

բում ավելի ամրացավ կադմակերպութեան զգոնութիւնը և նրա շարքերի միասնականութիւնը: Այդ կապակցութեամբ Կոմյէ-րիտմիութիւնը անհաշտ պայքար և ծավալել նաև բոլոր գույնի ապրտունխտական թեքումների նկատմամբ ցուցաբերվող հաշտ-վողական վերաբերմունքի դեմ: Կոմյէրիտմիութիւնն իրոք ար-գարացրեց իր կոչումը, վորպէս կուսակցութեան լավագույն ու համապատասխան ուղնականի, կուսակցութեան գլխավոր գծի կենսա-դորման համար, սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Հնգամյակի յերրորդ վճռական տարվա վիթխարագույն խըն-դիրների կենսադործումով ավարտվելու յն սոցիալիստական եկո-նոմիկայի հիմքի կառուցումը մեր յերկրում, ուստի պահանջվում է՝ կուսակցական, կոմյէրիտական, պրոֆեսիոնալ և հասարակա-կական բոլոր կադմակերպութիւններից, բոլոր բանվորներից ու աշխատավորներից ուժերի գերազույն լարում ու կենտրոնացում, անհրաժեշտ և լայն մասսաների համախմբումը կուսակցութեան ղեկավարութեան շուրջը: Կոմյէրիտական կադմակերպութեան վը-վճռական տարվա պլանների կատարման ու գերադասարման հա-մար ընկնում և չափազանց մեծ պատասխանատվութիւն՝ «Հըն-գամյակի արտադրական-ֆինանսական պլանների կատարման հա-մար պատասխանատու յն համարում յարաբանչյուր գործարա-ցի, գյուղի, կոլտնտեսութեան և գալնոցի կոմյէրիտմիութեան բջի-ջին, ու պլանի կատարման աստիճանով և գնահատվելու յուրա-բանչյուր բջիջի աշխատանքը» (Հայ. ԼԿՅԵՄ 7-րդ համագումարի վորոշումից):

Կադմակերպել և ոգտադործել հասարակական բոլոր լծակնե-րը, գործի դնել բոլոր հնարավորութիւնները՝ նրանց ճիշտ ու ապրիոնալ ոգտադործման նպատակով, ել ավելի ծավալել սոց-մրցումն ու հարվածայնութիւնը մեր աշխատանքների բոլոր ո-ղակներում, Համ. ԼԿՅԵՄ 9-րդ համագումարի վորոշումների հիման վրա իրականացնել կոմյէրիտականներին գլխովին սոց-մրցման ու հարվածայնութեան մեջ ներգրավելու գործը, ավելի ծավալել պայքարը յերկու ֆրոնտի վրա, կուսակցութեան գլխա-վոր գծից դոյութիւն ունեցող թեքումների ու շեղումների դեմ, կադմակերպել ու գլխավորել յերիտասարդ բանվորութեան և վորղ աշխատավորութեան արտադրական յեռանդը, ուղղելով այն վըն-ռական տարվա պլանների կատարման գործին: Ահա այն կարեա-րագույն ու վճռական նշանակութիւն ունեցող խնդիրները, վը-

րոնք պիտի կազմեն կոմյէրիտական կադմակերպութիւնների վորղ աշխատանքների հիմնական առանցքը:

«Առաջիկա ժամանակշրջանում Համ. ԼԿՅԵՄ՝ աշխատանքի վճռական խնդիրն է հանդիսանում մարիլիգացիայի յեմքարկել կոմ-յէրիտմիութեանը, և նրա ղեկավարութեան տակ գտնված անկու-սակցական յերիտասարդութեան ամբողջ ենթագիւն ու կամքը՝ կա-տարելու հնգամյակը 4 տարում, ի կատար ածելու ԽՍՀՄ-ում սո-ցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը 1931 թ., վերջնա-կանապէս ննշելու դասկարգային թշնամու, պորետարիատի թշնամի ուժերի պիմադրութիւնը» (Համ. ԼԿՅԵՄ 9-րդ համագում-արի վորոշումներից):

Այս վիթխարի խնդիրների կատարմանը կոմյէրիտական կադ-մակերպութեան բոլոր ողակների աշխիւ, աուրյա ու դործնական մասնակցութիւնն ապահովելու տեսակետից և, վը այժմ իր ամ-բողջ մեծութեամբ գրվում է կոմյէրիտական աշխատանքների վե-րադասումից, նրա ուժերի ճիշտ դասավորման, այդ ուժերը դե-պի՝ ցելս, բրիգադ, և սմենա ուղղելու խնդիրը:

Համ Կ (բ) Կ Կենտկոմի գիրեկաիվում ասված է՝ «Պարտավո-բեցնել զուս-կադմակերպութիւններին, կատարելու կենտկոմի 1930 թ. հունիսի 16-ի վորոշումները, վոր պահանջում է ստեղծել սեկտորային ամենակում շարժական սիստեմ-կուսակցական ցե-րային բջիջներում, կադմակերպելով սեկտորներ՝ կուս-աշխատան-քի առանձին փունկցիաների համաձայն» (Համ. Կ (բ) Կ Կ մալիսի 24-ի վորոշումից):

Բջիջներում սեկտորային սիստեմով աշխատանքները կադմա-կերպելու մասին այս վորոշումը անկասկած վերաբերում է նաև կոմյէրիտական կադմակերպութեանը, հետեվաբար այդ վորոշու-մով տեղը և առաջանորդվի նաև Կոմյէրիտմիութիւնը:

Կուսակցական, կոմյէրիտմիութեան աշխատանքի հիմնական ու նոր ճեղքից մեկը՝ դա բջիջներում սեկտորային աշխատանք-ների կադմակերպումն է:

Համ Կ (բ) Կ Կենտկոմի վորոշումների հիման վրա մեր կադ-մակերպութիւնն ևս ձեռնարկեց սեկտորների աշխատանքի կադ-մակերպմանը բոլոր բջիջներում: Բայց դժբախտաբար մենք այդ աշխատանքներում հաջողութիւն չունեցանք՝ բջիջների սեկտոր-ները բոլոր անգերում, չնչին բացառութեամբ, մնացին լուկ թղթի վրա և չավին սպասած արդշունքը: ԼԿՅԵՄ Յերեմանի կադմակեր-պութեան ստորին ողակների հաշվետու վերնադրական կամպա-նիայի ընթացքում պարզվեց, վոր սեկտորային աշխատանքները

կազմակերպութեան մեջ ամբողջովին մատնիւմ են յեղել անդոր-
ծունեցութեան, անդամ առանձին տեղերում սեկտորային աշխա-
տանքի սկզբունքները խախտել են ու աղավաղել, տալով սեկ-
տորներին «սիրող խմբակներին» կերպարանք: Կազմակերպութեան
առանձին սղակներում նկատվել են սեկտորային աշխատանքի ա-
ռավելութունները թերազնահատման ուղորդունիստական տրա-
մադրութեաններ, և այս բոլորը շնորհիւ այն բանի, Վոր կազ-
մակերպութեանը պարզ պատկերացում չի ունեցել սեկտորների
կազմակերպչական կառուցվածքի, նրանց ֆունկցիաների և ստո-
րաբաժանման մասին: Բյուրոները ներկա վերընտրական կամպա-
նիայի ընթացքում ավելի լրջորեն պիտի դնել բջիջային աշխա-
տանքների վերակառուցման խնդիրը, կատարելով այդպիսին սեկտո-
րային սխեմների դարգացման ու ճիշտ կիրառման անհրաժեշտու-
թեան հետ:

Սեկտորը, դա բջիջի բյուրոյին անմիջական ոժանդակող ո-
ղակն է: Սեկտորը յեղնելով բջիջի բյուրոյի առաջադրած խն-
դիրները—նսխարոք կազմակերպում է ու նախապատրաստում
և այդ խնդիրները բյուրոյի նիստի համար: Սեկտորային սխեմ-
մը բջիջի աշխատանքների մասնաշաղկան ձևն է, Վորը նպատակ
է դնում աշխատանքի մեջ քաշել բոլոր կոմյերիտականներին,
կազմակերպել բջիջի աշխատանքն ավելի մասնաշաղկան ձևով:
Այդ նպատակով յուրաքանչյուր սեկտորի ղեկավար իր շուրջն է
համախմբում կոմյերիտական բջիջի անդամները Վորոշ մասին,
Վորոնք հետաքրքրվում են ավելի առաջադիւղի աշխատանքով, և
կազմակերպում է սեկտորի կոյեկտիւլ և կանկրետ ողնութեանը
բջիջի բյուրոյի, բջիջի աշխատանքները ղեկավարելու դործում:
Սեկտորի յուրաքանչյուր անդամ իր ցանկութեանը հայտնելով աշ-
խատել ավելի սեկտորում, ստանում է կայուն առաջադրանք Վո-
րեն աշխատանքի ուղղութեամբ, Վորի կատարման համար ամ-
բողջապես պատասխանատու յե ինքը: Կարելի յե հատուկ հանձ-
նարարութեաններ անել նաեւ անկուսակցական յերիտասարդնե-
րին, իհարկէ Վոշ կոմյերիտական բնույթ կրող հարցերի նկատ-
մամբ, պետք է ձեռք առնել բոլոր միջոցները արտադիւթեանկան
յերիտասարդութեանը մոտիկ պահելու ու մասնակցի դարձնելու
կոմյերիտմիութեան աշխատանքներին սեկտորների միջոցով, ա-
յսպէսով կոմյերիտմիութեան աղբեցութեանն ու ղեկավարու-
թեանը արտադիւթեանկան յերիտասարդութեան վրա:

Յուրաքանչյուր սեկտոր ունի համապատասխան ֆունկցիո-

ներ: Յերնելով բջիջի բյուրոյի աշխատանքի ծրագրից, սեկտորն
իր նիստում մշակում և կազմում է իր աշխատանքի ծրագիրը,
Վորը հաստատվում է բջիջի բյուրոյի կողմից: Սեկտորների ծրա-
գիրը պետք է կազմել այն հաշվով, Վոր մինչեւ բյուրոյի նիստը
սեկտորը նախորոք պատրաստի, մշակի և բյուրոյին ներկայացնի
քննիլող խնդիրները, նախատեսված ու կազմակերպված ձևով:

Յուրաքանչյուր սեկտորի ընդգրկած աշխատանքը բաժանվում
է առանձին մասերի, ամեն մի մասի կատարումը հանձնարարվում
է սեկտորի Վորեն անդամին, Վորը համարվում է ավելի աշխա-
տանքի կազմակերպիչը: Իր ստանձնած աշխատանքի կատարման
համար կազմակերպիչը, պատասխանատու յե սեկտորի առաջ-
սեկտորների աշխատանքների հաջողութեամբ և բնորոշվելու բջի-
ջի աշխատանքների հաջողութեանը: Աշխատանքի սեկտորային
սխեմները նպատակում է բջիջի կոյեկտիւլ աշխատանքին, դրա հա-
մար յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր է, ըստ իր ցան-
կութեան, ընտրել աշխատանքի Վորեն բնադաւաւ և աշխատել
Վորեն սեկտորում:

Կազմակերպիչների աշխատանքների անմիջական ղեկավարը
հանդիսանում է սեկտորի Վարիչը: Վերջինս Վորոշում է յուրա-
քանչյուր կոմյերիտականին, կազմակերպչին տրված հանձնարա-
րութեանների կատարման ժամկետը: Կազմակերպիչը կատարելով
իր հանձնարարութեանը, այդ առթիւ ղեկուցում է սեկտորի Վո-
րիչին: Այն խնդիրները, Վորոնք կատարումը անմիջականորեն վեր
է կազմակերպչի ուժերից, հնարավորութեանները և նրա ֆունկ-
ցիաներից, ապա այդ ղեկուցում խնդիրը կազմակերպչի կողմից
մտցվում է սեկտոր: Սեկտորի նիստը մանրամասնորեն քննութեան
առնելով ավելի խնդիրը, կայացնում է համապատասխան Վորո-
շում, իսկ յեթե անհրաժեշտ է, խնդիրն ամբողջապես փոխադրվում
է բջիջի բյուրո՝ լուծում ստանալու: Սեկտորային աշխատանքների
հաջողութեան նախապայմանն է յուրաքանչյուր կոմյերիտականի
ինքնադիտակցութեանն ու ինքնապատասխանատվութեանն բարձ-
րացումը: Յուրաքանչյուր կոմյերիտական պարտք պիտի համարի
իր ժամանակին ու ճշտութեամբ կատարելու բջիջի կամ սեկտո-
րի կողմից իրեն տրված հանձնարարութեանները, բացի այդ նաեւ
պետք է ավելի քան ուժեղացնի՝ ինչպէս բջիջում նույնպէս և սեկ-
տորում՝ կատարման-ստուգման գործը: անմիջապէս 15 որը մեկ
անգամ սեկտորում պիտի լսել առանձին կազմակերպիչ-
ների ղեկուցումներն այն մասին, թե ինչպէս են կատարել
իրենց հանձնարարութեանները, յեթարկելով միութեանկան

խիստ պատասխանատուության հանձնարարությունները չկատարողներին: Ամիսը մեկ անգամ բլիշի բյուրոյում պիտի լսել այս կամ այն սեկտորի ղեկավարի ղեկուցումը՝ սեկտորի ընդհանուր դրուժյան և նրա աշխատանքների մասին՝ այսպիսով ապահովելով սխտեմատիկ կոնտրոլն ու ստուգումը կատարման վրա: Կարելի չե ունենալ հետեւյալ սեկտորները՝

1. Մասնաշաղկան-տնտեսական:
2. Կրթության և կենցաղի:
3. Ագրոտայի և պրոպագանդայի:
4. Կազմակերպչական:
5. Խորհրդային-հասարակական:
6. Ռազմական:
7. Կոոպերատիվ:
8. Պիոներական:

Առանձին սեկտորներն ունեն հետեւյալ ֆունկցիաները՝

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ.—Այս սեկտորը պատասխանատու չե տվյալ գործարանի, կոլտնտեսության հիմնարկի կամ գյուղի վոդլ արտադրական-տնտեսական աշխատանքների համար:

Այս սեկտորի ֆունկցիաների մեջ է մտնում՝ կազմակերպել պայքար արտադրական պլանների կատարման համար: Մասնավոր սոց-մրցումն ու հարվածայնությունը՝ առաջին հերթին ապահովելով կոմյերիականներին 100 տոկոսով սոց-մրցման ու հարվածայնության մեջ ներգրավելու գործը: Զբաղվել աշխատանքի սոցիալիստական ավելի բարձր ձեւերի՝ արտադրական կոլեկտիվների և կոմունաների կազմակերպման գործով: Կազմակերպել կոմյերիականների և վոդլ արտադրության կենտրոնական յերիտասարդության ղեկավարական նախաձեռնությունն արտադրանքի վորակի բարձրացման, ինքնարժեքի իջեցման, ուսցիոնալիզացիայի, արտադրության առանձին պրոցեսների մեքենայացման, գյուտարարության, տվյալ ձեռնարկի պլանա-ուպերատիվ աշխատանքների կազմակերպման և այլ խնդիրների շուրջը:

Սեկտորը հետեւում է և յերեւման է բերում կեղծ հարվածայիններին, գործալիքներին, սիմուլյանաներին, չվողներին և ուրիշ պայքար է մղում նրանց դեմ, միջեցներ է ձեռք առնում աշխատանքի գիսցիպլինան իր բարձրության վրա դնելու համար, զոնում է աւ նպատակով մեքենաների, քաչող անասունների (գաչաներում) լրիվ ծանրաբեռնվածությանը, ներքին միջոցների և հրաշքովորությունների ազատգործմանը, բանվորական ուժի նպա-

տակահարմար բաշխմանը, կոլտնտեսություններում գործաժար-ճային սխտեմի կիրառմանը: Մաստեսեկտորը զբաղվում է ցանք-ռի, բերքի պաշտպանման, բերքահավաքի և բերքի բաշխման խնդիրներով: Սբա ֆունկցիաների մեջ է մտնում բոլոր տիպի տնտեսական կամ կամպանիաների գործնականում կիրառումը (հացածթերում, մոի մթերում, կալվի մթերում, յուղի մթերում և այլն): Կուս-բլիշի, գործարկումի և դիրեկցիայի ու ինժեներա-տեխնիկական անձնակազմի հետ միասին մշակում է կոմյերիտականների, ինչպես նաև յերիտասարդ բանվորների վորակավորման և վերավորա-նալորման գործը, կիրառում է «Տեխնիկա մասսաներին» յոզուն-դը՝ հատուկ խմբակների և կարճատե կուրսերի կազմակերպման միջոցով վերացնում է բանվոր յերիտասարդության տեխնիկական անդրադիրությունը, զբաղվում է արտադրական կադրերի պատ-բասուման, վերապատրաստման և առաջ քաշման խնդիրներով, ինչպես և յերիտասարդությանը տեխնիկական, արտադրական ԲՈՒՀ-երն ու այլ ուսումնական հաստատությունները գործազ-գելու խնդիրներով: Այս սեկտորի վրա յե ընկնում ելեկտրոֆիկա-ցիայի և պղնձի նկատմամբ ստանձնած շեֆական պարտավորու-թյունների կատարումը: Այս սեկտորն է՝ զբաղվում է կոլեկտիվ ու խորհ. անտեսությունների յինարարության խնդիրներով, կազ-մակերպում է փոխառությունների իրացումը և պահպանումը, բա-լար տեսակի դրամական միջոցների մորիլիզացիան և այլն:

Սեկտորն իր շուրջը համախմբված ակտիվի մեջ կատարում է աշխատանքի ստորաբաժանում՝ աշխատանքի հետեւյալ բնագա-ժաանքի համար ունենալով հատուկ կազմակերպիչներ:

1. ՍՈՏ-ՄՐՏՄԱՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-ՊԻՉ. —Կազմակերպում է կոմյերիտականների և արտադրության-կան յերիտասարդության ընդգրկումը սոցմրցման ու հարվածա-րության մեջ: Ուսումնասիրում է սոցիալիստական աշխատանքի ավելի բարձր ձեւերի ստեղծման հնարավորությունները և նախապատրաստում է պայմաններ արտադրական կոլեկտիվներին, արտեղների և կոմունաների կազմակերպման համար: Զբաղվում է սոցմրցման հաշվառման խնդիրներով:

2. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ. —Հետեւում է և կազմա-կերպում է կոմյերիտականներին գլխովին արտադրական հանձ-նաժողովի աշխատանքներին մասնակից դարձնելու գործին, հըս-կում է, վորպեսզի ժամանակին կյանքում կիրառվեն արտ-խոր-հրգակցության վորոշումները: Բանվորական առաջարկների հա-

գաղման հիման վրա ողնում և ոժանդակում և այդ առաջարկները մշակելուն և գործադրելուն: Ձեռնարկում և կոնկրետ միջոցառումներ՝ կոմյերիտականներին ակտիվ մասնակից դարձնելու գործարանի ռացիոնալացման, մեքենայացման, գլխատարաբուխի, ինքնաբեկի իջեցման, վորակի բարձրացման գործին: Վողջ հարվածաշնության, գործալքումների, պարտադրողների, աշխույժողիկայինայի խախտման, աշխատանքի դասալքության դեմ մղվող պայքարի խնդիրները կադրում են այս կադմակերպչի աշխատանքի հիմնական առանցքը:

3. ՄԱՍՍՍՏԱԿԱՆ ԿԱՊԱՆԻՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.—

Ղեկավարում և արտադրական բուքսերները, շաբաթորակները, շաուբները: Կադմակերպում և աշխատանքի մասսայական ձեռքեր՝ արգիլականներում առաջացած ճեղքվածքները ծածկելու համար: Կատարում և փոխարություններ իրացումը և ապահովումը: Կադմակերպում և կոմյերիտականներին խնայողական գրադարկներում ընդգրկելու գործը: Ինչպես նաև սև ու սպիտակ հացի հավաքումը և այլն:

4. ԿԱՆԻՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Կադմակերպում և յերիտասարդների առաջընթացները, հետևում և իրենց մոտ աշխատող առաջընթացի համար աշխատանքի նպաստավոր պայմաններ ստեղծելու գործին: Կադմակերպում և ու ղեկավարում «տեխնիկա և մասսաներին» լողունդի կերամոմն ու յերիտասարդների տեխնիկական անդրադիտության լիկվիդացիան, հսկում և հիմնարկի ներսում և այլ վայրերից յեկող աշակերտների արտադրական պրակտիկայի կանոնավորմանը, պայքարում և յերիտասարդության վորակավորման ու վերավորակավորման համար: Կոմյերիտականներին ու արտամիութենական յերիտասարդությանն առաջադրում և գործուղել արտադրական, տեխնիկական ԲՈՒՀ-երը և այլ դպրոցները: Պատասխանատու յե կադրերին վերաբերվող բոլոր խնդիրների համար:

5. ՊՐՈՑԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Կադմակերպում և կոմյերիտական աշխատանքը պրոֆիտիյան մեջ: Զբաղվում և բանվորա-աշխատավոր յերիտասարդության ընդգրկումով պրոֆիտիյան շարքերը, ակտիվորեն մասնակցում և կող-պայմանադրերի կնքման կամպանիային: Այս կադմակերպչը հանդիսանում և կոմյերիտ-ըջի ներկայացուցիչը գործարկում, հրահում և, վորպեսզի կոմյերիտականները ժամանակին կատարեն

պրոֆ-պարտականությունները (տնդամավճարների մոռում պրոֆ-ժողովներին հաճախել և այլն):

6. ԵԼԵԿՏՐՈՑԻԿԱՑԻՍՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Ձեռնարկում և միջոցառումներ՝ Ելեկտրոֆիկացիայի նկատմամբ ստանձնած չեֆական պարտավորությունների կատարման համար, կադմակերպում և ղեկավարում եներգո-ըջիները, զբաղվում և և հատկապես յայտի, Ելեկտրո-եներգիայի խնայողությամբ, պայքարում և կորուստների դեմ և այլն:

7. ԳՑՈՒՂ-ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— (Բաղաճային ըջիներին կից) կադմակերպում և գյուղատնտեսության ասպարիզում ըջիջի տնկատունիք մասնակցության գործը, ուրվադում և ըջիջի կողմից արքվիլիք ողնությունը, կոլ- և խորհ- տնտեսություններին, աշակցում և գյուղատնտեսական կամպանիաների, մթերումների գործին ողնում և ոժանդակում և ԳԳՁԱ ընկերության աշխատանքներին: Հանդիսանում և ԼԿՑԵՄ ըջիջի ներկայացուցիչը այդ կադմակերպության մեջ:

8. ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— (Գյուղի և կուտեսության ըջիջիներին կից): Զբաղվում և ղեկավարում և կուտեսչինարարութ- մեջ կոմյերիտականներին ներգրավելու գործը: մասնակցում և կուտեստեսության ներքին աշխատանքների կադմակերպմանը՝ աշխատանքի բաշխմանը և բանուծի կարգավորմանը: Կադմակերպում և կոմյերիտականներին մասնակցությունը դաշտային բրիգադի աշխատանքներին, մասնակցում և բերքի բաշխմանը, դաշտավարձային սխառմի կիրառմանը, կուտեստեսության աճմանը, նրա քանակական ու վորակական ամրացման գործին:

9. ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— (Գյուղի և կուտեստեսության ըջիջիներին կից) Պատասխանատու յե բոլոր տեսակի գյուղատնտեսական մթերումներին՝ (հացի, կաշվի, յուղի, ձվի և այլն) հաղող ընթացքին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԵՆՅԱԼԻ ՄԵԿՏՈՐ.— Կադմակերպում և պայքարը հին կենցաղի դեմ: Յերեկան և բերում կենցաղային այլանդակությունների և հիմնդադին յերեկույթների կոնկրետ կրողներին, նրանց մեջ ուժեղացնում և մասսայական-դատիտակչական աշխատանքները, պայքարում և գինեմուլության, հարբեցողության, թղթախաղի և նման յերեկույթների դեմ: Կադմակերպում և ցուցադրական-հասարակական դատեր նման յերեկույթների կոնկրետ կրողների նկատմամբ՝ հետագա յերեկույթները կանխելու համար, հետադիում և յերիտասարդության

կենցաղի կազմակերպումը նոր տոնախմբության ձևերով: Այս սեկտորը կազմակերպում է յերիտասարդութան կենցաղային կոմունաներ դործարաններին, կոլտնտեսություններին, ուսումնական հիմնարկներին կից, աջակցում է հակաէրոնական աշխատանքներին, գիտական ու առօրյա կյանքից վերցրած փորձերը նախադրում է կոնկրետ նախադաշարումներին, պայքարում է սոցիալապաշտպան դեմ, ուժանդակում է «Մարտնչող Անաստվածների Միություն» բնիկ աշխատանքներին, կոմյերիտականներին գլխավոր ներգրավելով ՄԱՄ-յան կազմակերպության մեջ, պայքարում է յերիտասարդութան առողջապահական գործության բարելավման համար, սիստեմատիկորեն բանվոր յերիտասարդությանն ուղարկում է բժշկական քննության, պարզելու նրանց հիվանդությունը և, համապատասխան կազմակերպությունների միջոցով առեղծում է հնարավորություններ նրանց բուժման համար, գեկավարում է ֆիզկուլտ-խմբակի աշխատանքները, մասնակցում է յերիտասարդությանը հանգստյան տներ ու անաստորիաներ առաջարկելու գործին, հսկում է գործարանի կամ հիմնարկի սանիտարական գրուկյան վրա, զբաղվում է կոլսոցիալիզմի նախատեսված բանվոր-յերիտասարդության իրավունտեսական շահերին վերաբերվող կետերի կիրառման գործով: Այս սեկտորը պարտականություն է մտնում՝ պարտադիր ուսուցման ու անգրագիտության լիկվիդացիայի կազմակերպման վողջ աշխատանքները, կազմակերպում է կոմյերիտականների, արտադրությունական յերիտասարդության ու նրանց ընտանիքի անդամների ընդգրկումը գործունեության, ինչպես և հսկում է պարտադրականների ընթացքի և ավանդվող դասերի յաւրացման վրա, զբաղվում է յերիտասարդության հանգստի ու զվարճալիքի կազմակերպման գործով (կինո, թատրոն, յերաժշտություն, պրոլետ-գրականություն և այլն):

Սեկտորն ըստ իր աշխատանքի առանձին բնագավառների ու նենում է հետեվյալ կազմակերպիչները՝

1. ԿԵՆՏՅԱԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.—Կազմակերպում է սիստեմատիկ պայքար հին կենցաղի ու նրա մնացորդների դեմ, մասնավորապես կոմյերիտական շարքերում, պայքարում է հարբեցություն, գինեմոլություն, թղթախաղի և այլ հիվանդալի յերեվելայինների դեմ, աշխատում է կազմակերպել յերիտասարդական կենցաղային կոմունաներ: Յերիտասարդության համար պարբերաբար կազմակերպում է դիտական գեկուցումներ՝ կենցաղային առանձին խնդիրների շուրջը:

2. ՅԻԶԿՈՒԼՏ-ԱՌՈՂՋԱԳԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.—Զբաղվում է ֆիզկուլտ աշխատանքների ակտիվացումով և ապահովում է կոմյերիտականների ընդգրկումը ֆիզկուլտ-խմբակներում, հետևում է կոմյերիտականների կանոնավոր հաճախմանը, կազմակերպում է ֆիզկուլտ մրցումներ, յիւլյիներ և ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները ֆիզկուլտուրան մասսայականացնելու համար, ակտիվ մասնակցություն է ունենում յերիտ-բանվորների հանգստյան տներն ուղարկելու գործում, հատուկ յետյակներ փնտրում հսկում է գործարանի և հիմնարկի սանիտարական գրուկյան վրա, ինչպես ներսում, նույնպես և հիմնարկ-ձեռնարկի շրջակայքում: զբաղվում է յերիտասարդության բնակարանային խնդիրներով, սիստեմատիկաբար բժշկական քննության միջոցով պարզելով յերիտասարդության առողջապահական գրուկյանը, համապատասխան կազմակերպությունների միջոցով ձեռնարկում է կոնկրետ միջոցառումներ՝ նրանց բուժման համար, կազմակերպում է բժշկական գեկուցումներ՝ առողջապահական առանձին խնդիրների շուրջ և այլն:

3. ՀԱՆԳՍՏԻ ՈՒ ԶՎԱՐՃԱԼԻՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.—Զբաղվում է յերիտասարդության հանգստի ու զվարճալիքի կազմակերպման խնդիրներով: Կազմակերպում է՝ թատրոնի և կինոների կոլեկտիվ դիտումներ, եքսկուրսիաներ դանադան արտագրական վայրերը, ինչպես և քննության մեջ: Կազմակերպում է քաղաքական ու գեղարվեստական գրականության բարձրագույն ընթերցում, մասսայական գրոսանքներ և այլն: Կազմակերպում է նաև աշխատանքը իւրհիթներում և կարմիր անկյուններում:

4. ԳԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅԵՎ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՅԻՄԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.—Կազմակերպում է հիմնարկում աշխատողների անգրագիտության լիկվիդացիա ու նրանց յերիտաների պարտադիր ուսուցման ցանցում ընդգրկելու գործը: ինչպես և զբաղվում է նրանց գրեկական պիտույքներ հարթայթելու գործով:

5. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.—Զբաղվում է բանվորների, ծառայողների համապատասխան դպրոցներում տեղավորելու գործով, ինչպես և համապատասխան կազմակերպությունների միջոցով առեղծում է հնարավորություններ՝ դպրոցականների կողմից դասերին կանոնավոր հաճախելու համար:

6. ՄԱՄՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.—Զբաղվում է բնիկ ներսում ինչպես և բանվորների, ծառայողների շրջանում թերթե-

րի, գեղարվեստական, քաղաքական գրականութեան և պլակատների տարածման գործով:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ. — Կազմակերպում և հակակրօնական պայքարը, ինչպես և նպաստում է ՄԱՄ կազմակերպության աշխատանքների աշխուժացմանը, պատասխանատու յե կոմյերիտականներին 100 տոկոսով ՄԱՄ-յան շարքերը ընդգրկելու, ինչպես և հետեւում է, վորպեսզի վերջիններս անպայման կատարեն իրենց պարտավորութեաններն ՄԱՄ-յան նկատմամբ, ակտիվ մասնակցութեան ցուցաբերելով նրա աշխատանքներին. դադարեցնել, դադարեցնել աշխատանքների միջոցով ձեռնարկում և միջոցներ վերացնելու քանի որ—ծառայողների, աշխատավոր գյուղացիութեան, մասնավորապես կոմյերիտականների շրջանում գոյութեան ունեցող կրօնական նախապաշարումները, ակումբներում ու կարմիր անկյուններում, նույնպես և խրճիթ—ընթերցարաններում գիտական փորձերի և զեկուցումների միջոցով մասսայականացում և հակակրօնական աշխատանքների խնդիրները՝ ներդրակելով այդ գործում ամբողջ կոմյերիտական կազմակերպութեանը և աշխատավոր յերիտասարդութեանը:

ԱԳԻՏԱՅԻՍՏԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ՄԵԿՏՈՐ. — Ղեկավարում և բջիջի մասսայական ազիտացիոն ու պրոպագանդիստական վոլչ աշխատանքները, մոբիլիզացիայի յե յինթարկում կոմյերիտական մասսայի ու արտախոթենական յերիտասարդութեան վոլչ ուժերը՝ Դաշնակցութեան ու նրա լավագույն ոգնական Դաշնակցութեան գեմ պայքարելու: Գործնականում ժշակում և կոմյերիտութեան իդեոլոգիական Ֆրոնտի խնդիրները, կոմսոմոն ու յերիտասարդութեանը պայքարի յե հանում կուսակցութեան գլխավոր գծի կենսագործման համար, պայքարում և նախապատեման բոլոր գույնի թեքումների գեմ, պայքարում և մեծապետական շովինիզմի գեմ, վորպես ներկա շրջանի գլխավոր վտանգ՝ սոցալիս հարցում և տեղական նախնայիզմի գեմ, թզում և պայքար՝ աջ սոցիալիզմի, «ձախ» շնդումների, արոցկիզմի ռեյդիզմների, ինչպես և գրանց նկատմամբ հաշտվողական վերաբերմունքի բոլոր արտահայտութեանների գեմ, կազմակերպում և հատուկ աշխատանք սոցալիս վորքումանութեանների մեջ ու ղեկավարում և բջիջի խտրնացիոնալ դաստիարակութեան գործը, կազմակերպում ու ղեկավարում և քաղ-ուսուցման գործը, հետապնդում և կոմյերիտականների, ինչպես և արտախոթենական

կան յերիտասարդութեան քաղաքական պատրաստականութեան և ակտիվ բարձրացման գործը, ղեկավարում ու անց և կացնում քաղաքական—մասսայական կամպանիաները, ինչպիսին և Մայիսի 1-ը ՀԱՅԻ Խորհրդայնացման տարեդարձերը և այլն: Այս սեկտորը ղարկում և նաև պրոլետարական արվեստի խնդիրներով, ռժանդակում և ՄՈՊՐ-ի աշխատանքներին և կոմյերիտականներին 100 տոկոսով ՄՈՊՐ-ի շարքերը ընդգրկելու գործին, կազմակերպում ու ղեկավարում և բոլոր տեսակի քաղաքական ու անտեսական կամպանիաների ազիտացիոն—պրոպագանդիստական մասը, ռժանդակում և պատի թերթի աշխատանքներին և այլն:

Սեկտորն ըստ իր աշխատանքի առանձին յնաղավառների ունենում և հետեւյալ կազմակերպիչները՝

1. ԱԳԻՏ-ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ. — Ձարկում և մասսայական—ազիտացիայի խնդրով, սիստեմատիկաբար ունենում և բջիջային և արտա—բջիջային գեկույցներ ու դասախոսութեաններ՝ իդեոլոգիական առանձին խնդիրների շուրջը, հաշի յե առնում բջիջում գտնվող բոլոր պրոպագանդիստներին, կարճատեմ կուսերի և ղրույցների միջոցով նրանց վերապատրաստում և և ոգտագործում քաղաքական, տնտեսական առանձին կամպանիաներում՝ քաղաքական—ազիտացիոն աշխատանքներ կատարելու համար:

Սիստեմատիկաբար կազմակերպում և ազիտացիոն ցուցադրական դասեր՝ արտադրութեան խնդիրների վերաբերյալ, ղարկում և ինտերնացիոնալ դաստիարակութեան խնդիրներով, ռժանդակում և ՄՈՊՐ-ի աշխատանքներին, ինչպես և պատանի ՄՈՊՐ-ականների աշխատանքներին, հանդիսանում և բջիջի ներկայացուցիչը ԱՌՊՐ-ում:

2. ԹԵՈՐԵՏԻԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ. — Ղեկավարում և բջիջի քաղուսուցման գործը, սիստեմատիկաբար կազմակերպում և քաղ—մարտեր, վորով նպատակ է դնում յերեման բերելու բջիջի անդամների և ընդհանրապես քաղցանցում ընդգրկվածների քաղաքական պատրաստականութեան և քաղցանցում անցածի յուրացումը:

3. ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ. — Ղեկավարում և բոլոր տեսակի քաղաքական կամպանիաները՝ մայիսի 1-ը, ՄՅՈՒԴ-ի որ և այլն: Ապահովում և ղանաղան կամպանիաներում, ցույցերում և տոնակատարութեաններում կոմյերիտականների ակտիվ մասնակցութեանը, պատրաստում և կամպանիա-

ների տեխնիկական, քաղաքական, գեղարվեստական և կազմակերպչական կողմերը:

4. ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Կազմակերպում է թղթակցական շարժումը, դրաղվում է պատի թերթի կանոնավորման խնդիրներով: Պատի թերթերի անհատական ու խմբակային թղթակցությունների միջոցով ծավալում է և խորացնում ինքնաքննադատությունը աշխատանքների բոլոր բնագավառներում, ոտուկում և մամուլում լույս տեսնող բլիշի աշխատանքների վերաբերյալ հոգիածները:— պարզելու համար նրանց ճշտությունը և համապատասխան սեկտորների միջոցով ձեռնարկում է հոգիածում նշված բացերի և թերությունների վերացմանը: Հանդիսանում է ԼԿՑՑԾ ԲՆԻՇԻ ներկայացուցիչը խմբկողի կազմում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ.— Զբաղվում է կազմակերպության աճման և սոց-կազմի կարգավորման խնդիրներով, հետևում է վորպեսդի ժամանակին առանց ձգձգումների լուծվի Միության շարքերն ընդունվելու համար գիմում ներկայացուցիչների հարցերը, ամեն կերպ ոժանդակում ու աջակցում է առանձին ընկերների Միության մեջ ընդունվելու համար, տալիս է օրտեժատիկ ողնություն՝ խմբակային, ցեխային կազմակերպիչներին, օգնում է նրանց, հսկում է բլիշի ներսում աշխատանքների և պարտավորությունների ճիշտ բաշխմանը, կազմակերպում է ինֆորմացիայի գործը, հետեվում է բլիշներում գոյություն ունեցող կոնֆլիկտային գործերի ժամանակին լուծմանը, օժանդակում է կուսակցության ղեկավարության ամբաղնդման և զբաղվում է հյուս-կորիզի ու ժեղացման խնդիրներով, հետեվում է կոմյերիտականների կողմից ստանձնած պարտավորությունների ճիշտ կատարման (անդամավճարների մուծում, ժողովների հաճախում և այլն):

Սեկտորը, ըստ իր աշխատանքի առանձին բնագավառների, առնեում է հետեվյալ կազմակերպիչները՝

1. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Սրա մոտ են գտնվում կոմյերիտականների քարտերն ու անձնական գործերը: Հաշվառման կազմակերպիչը զբաղվում է կոմյերիտականների պարտավորությունների բաժանման և կարգավորման խնդիրներով, համաձայն Կոմիտեյի վորոշման կատարում է առանձին նշանակումներ կոմյերիտականների անձնական քարտերում (Միութենական տոմսեր), Կոմիտեյից ստանում է տոմսերը և հանձնում շոր ընդունված կոմյերիտականներին:

2. ԲԶԻՋԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ.— Վարում է ԲԶԻՋԻ տեխնիկական դործերը:

Ծանոթություն.— Տեխնիկական քարտուղարն անպայման ընտրվում է և հաստատվում ԲՆԻՇԻ բյուրոյի կողմից:

3. ԻՆՖՈՐՄԱՏՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Հավաքելով բլիշում գոյություն ունեցող բոլոր նյութերը՝ ժամանակին ներկայացնում է կոմիտե և համապատասխան տեղեր ինֆորմացիոն տեղեկագրերը ԲՆԻՇԻ բոլոր աշխատանքների մասին:

4. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱԶՄԱՅՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Աջակցում է բանվոր և աշխատավոր յերիտասարդություն Միության մեջ ընդգրկվելու դործին, բաժանում է անկետաները, հետաքրքրվում է ընդունման պրոցեսով, զբաղվում է բլիշի սոց-կազմի կարգավորման խնդրով, ինչպես և ողնում ու օժանդակում է այն կոմյերիտականներին, վորոնց պետք է կուսակցության շարքերը տեղափոխել:

5. ԿԱՊ.— ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Կապվում է այլ բլիշների հետ և ստեղծում է հարապարտություններ աշխատանքի վործի փոխանակման համար, լսում է այլ բլիշների կապի կազմակերպիչների տեղեկությունները՝ բլիշային աշխատանքների ընթացի մասին և այլն:

6. ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.— Հսկում է վորպեսդի կոմյերիտականներին, վորոնց պետք է կուսակցության շարքերը տեղադրվեն և պարտականությունները, հսկում է անդամավճարների դանձման և ժողովների հաճախմանը, ընդհանրապես զբաղվում է Միութենական ղիսցկայինայի խնդրով:

7. ՀԱՎԱՔԱՐԱՐ.— Զբաղվում է դրամական հաշիվներով (դանդան մուծումներ և այլն):

